



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ԱԶԱՏՆԵՆ ԹՅՈՒՆՆԵՐ ԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

«AZAT UT» ARMENIKH HMEPHCIIA EΦHMEPIAΔA

ԵՐԿՐՈՒՇԱԲԹԻ 14 ՅՈՒՆԻՍ 1993 49ԳԻ ՏԱՐԻ ԹԻԻ 14-683

ΔΕΥΤΕΡΑ 14 ΙΟΥΝΙΟΥ 1993 ΕΤΟΣ 49° αριθ. φύλλου 14.683

ՅՈՒՆԻՍՏԱՆ

Քարածիր՝ Աթենքի Մէջ

Պոսիկոյ սերպերու առաջնորդ՝ Ռատովան Քարանիչ Աթենք ժամանեց «Սերպ եւ հեղին բարեկամութեան» ընկերակցութեան հրատարակած ներկայ գտնուելու համար հանդիսարան մը՝ «Իրինիս Բէ Ֆիլիաս» մարզադաշտէն ներս:

Սերպ առաջնորդը յատուկ տեսակցութիւններ պիտի ունենայ վարչապետ Միցոպաֆիսի, Սերաֆիմ Արքեպիսկոպոսի եւ այլ պատասխանու անձնաւորութեանց հետ:

Լրագրողներու կողմէ հարցազրուելով Մոսկուայի մէջ ամերիկեան ուժերու ներկայութեան մասին, ան ըստ, թէ հաւանական կը նկատէ որ այդ ներկայութիւնը սպառնալիք մը ըլլայ Պոսիկոյ սերպերուն եւ որեւէ պատրուակով՝ անոնց ներխուժելու իր երկիրը:

Իստեղով ՆԱԹՕի որոշումներու մասին, Քարանիչ ըստ. «Մեր երկիրը ՆԱԹՕի անդամ չէ եւ հետեւաբար, ՆԱԹՕն իրաւունք չունի որեւէ որոշում անենելու մեր երկրին համար: Ունէ յարձակում եւ պիտի մտնի մեր կողմէ»:

«Յոյս»-ի Ամուսնութիւն Մը

Թեսաղոնիկէի եկեղեցիներէն մէկուն մէջ, երկէ յատկանշական պատկերապատմութիւն մը տեղի ունեցաւ:

Թէ՛ փեսան եւ թէ՛ հարսը վարակուած են դարուս հիւանդութեան, սակայն երկուքն ալ իրենց կեանքները կը միացնեն, նախ ուժ տալու համար իրարու, երկրորդ՝ հաւատարմով որ մտիկ ապագային անապայման «եար մը պիտի գտնուի այս հիւանդութեան չեղման համար»:

Նորաստեղծ ամուսնու կնիքադրուելու օրը, ան ի փառքով ըստինքն թշուառութեան փորձեւէն մեր, առ ի փառքով ըստինքն եւ միտքարութիւն հիւանդութեան վարակուողներուն:

ԵՐԿՐԱՇԱՐԺ

Առաւօտեան ժամերուն 5,2 միլիարդ աստիճանի երկրաշարժ մը ցնցեց արեւմտեան Յունաստանի Փրեթեզա շրջանը: Ցնցումը զգալի եղաւ Քերքիրայի, Աղրինոյի եւ այլ շրջաններու մէջ:

Զոհեր կամ վնասներ արձանագրուած չեն:

ՍՈՄԱԼԻԱ

Արիւնալի Բախումներ

Սոմալիոյ մայրաքաղաք Մոկաուտի մէջ կը շարունակուին արիւնալի բախումները տեղացի զանազան խմբաւորութեան եւ ամերիկեան ուժերու միջեւ:

Լրագրական աղբիւրներ կը հաղորդեն, թէ երկէ, ՄԱԿի ուժերու պատկանող փառատանցի զինուորներու կողմէ կրակ բացուած է խաղաղ ցուցարարներու վրայ, որոնք կը պահանջեն ամերիկեան ուժերու անմիջական հեռացումը երկրէ: Կը նշուի, թէ անցեալ շաբթուան ընթացքին, Սոմալիոյ ընդգլխավոր ճակատի պատկանող զինուորներու կողմէ սպաննուած էին փառատանցի 23 «կապոյտ սողաւորտակիրներ» (ՄԱԿի խաղաղարար ուժերուն պատկանող զինուորներ): Երկուսն զոհերու թիւը կը հասնի 20ի: Իսկ վիրաւորներուն՝ 50ի:

ԹՈՒՐԿԻԱ

Կին Մը՝ Վարչապետ

Թուրքիոյ պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով կին մը տիրացաւ վարչապետական պատասխանատու պաշտօնին, պարտութեան մատնելով իր երեք այլ հակառակորդները:

47 տարեկան, մասնագիտութեամբ՝ տնտեսագետ, Թանու Չիլլէր, 523 ջուէներով վարչապետ ընտրուեցաւ, յաջորդելով Միւլլէման Տէմիրլի, որ Թուրքիոյ Էօզալի մասէն ետք նախագահական պաշտօնին տիրացած էր:

Նոր վարչապետու հին կը պատկանի «Ուղիղ ձամբայ» կուսակցութեան, որուն նախագահութիւնն ալ ստանձնեց:

Լ. Ե. Ս. Յակոբեան Վարժարան

ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍ

Շաբաթ 12 յունիս 1993ի երեկոյեան ժամը 8ին բացուեցաւ Ազգային Լ. Ե. Ս. Յակոբեան վարժարանի նախակրթարանի բաժնի ամառային հանդէսը, ներկայութեամբ Սրբազան Զօր, Ազգ. Վարչութեան ներկայացուցիչներու, Ուսումնական հորիւորդի, գանազան միութեանց ներկայացուցիչներու, ուսուցչական կազմի, ծնողներու եւ ժողովուրդի հոծ բազմութեան:

Շրջանաւարտները բժախնդրօրէն պատրաստուած գեղեցիկ յայտագրով ներկաներուն հրամցուցին խմբերգներ եւ պարեր, ինչպէս նաեւ բատերական ձեւով ներկայացուցին իրենց դասարանային կեանքը, իւրաքանչիւրի ձեռքերու դրսեւորումով:

Խօսք առին պրն. տնօրէնը, Ուսումնական հորիւորդի ատենակազմը եւ Սրբազան Զայրը:

21 շրջանաւարտներ վկայական ստացան եւ նախակրթարանի բաժնէն անցան միջնակարգ:

Մանրամասն թղթակցութեամբ կ'անդրադառնանք յետագային:

ԱԹԵՆՔԻ Հ. Մ. Ը. Մ. Ը ՅԱՂԹԱԿԱՆ

Փարիզի «Հ. Մ. Ը. Մ. Ֆրանս»-ի վարչութեան կազմակերպած կողմագնդակի մրցաշարքը, Իսի-Լէ-Մուլիոնի ֆալգապետական մարզադաշտէն ներս, տեղի ունեցաւ շաբաթ 12 եւ կիրակի 13 յունիսին, Փարիզի, Վարանսի, Լոնտոնի եւ Աթենքի Հ. Մ. Ը. Մ. ի կողմագնդակի խումբերուն միջեւ, մարզական իսկական վայելք մը շնորհելով մարզատէր հասարակութեան: Սոյն մրցաշարքի յաղթանակի բաժակին տիրացաւ Աթենքի Հ. Մ. Ը. Մ. ի խումբը, նկուն յաղաթանակութեան մը որպէս արդիւնք: Մրցաշարքը կը հովանաւորուէր, Իսի-Լէ-Մուլիոնի ֆալգապետ Անտրէ Մանթիլի կողմէ:

Աթենքի Հ. Մ. Ը. Մ. ի խումբին մաս կը կազմէին եղբայրներ Թերզեան Յովհաննէս, Մարտունեան Գեորգ, Պարսամեան Արա, Գոյումեան Արշո, Ճէլաբեան Կարէն, Ասգեան Նազար, Վարդանեան Յարութիւն, Թագաւորեան Տիմոթիոս եւ Ապարեան Ալեքս: Խումբին մարզիչն է պրն. Եորդիոս Սողոմոս, իսկ պատուիրակութեան պատասխանատու՝ եղբայր Կարպիս Ճանիկեան:

ԱՐՑԱՆԻ ԿԵՑՈՒԱԾՔԸ ԵՌԵՎԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Ռուսաստանի, Մ. Նահանգներու եւ Թուրքիոյ նախաձեռնութեան նկատմամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Գերագոյն հորիւորդը իր պաշտօնական կեցուածքը նշեցաւ եւ պատասխանը փոխանցելու ուղղութեամբ չլրացաւ վերջնական եզրակացութեան յանգիլ:

Երկարատեւ եւ խոր քննարկումներէ ետք Գերագոյն հորիւորդը միաձայնութեամբ յանգած է այն եզրակացութեան, որ ներկայիս կարելի չէ դրական կամ ժխտական պատասխան տալ եռեակի նախաձեռնութեան, նկատի ունենալով, որ այսպիսի հարց մը աւելի խոր եւ համապարփակ քննարկումներու կը կարօտի:

Այս ուղղութեամբ ԼՂ Գերագոյն հորիւորդը ԵԱՀԿի Մինսկի խորհրդածոյսի նախագահ Մարիո Ռաֆայէլի ուղղուած նամակ մը խմբագրած է, բացատրելով՝ որ շատ լուրջ է կացութիւնը, փաստաբար յաւելեալ քննարկումի կը կարօտի եւ այս ուղղութեամբ խնդրելով որ յաւելեալ ժամանակ տրուի: Նշեմք, որ եռեակի նախաձեռնութեան պատասխանելու վերջնական պայմանաւորում յունիս 11ն էր:

Այս հարցով շաբաթ օր հանդիպում ունեցան Զայաստանի եւ Արցախի ղեկավարութիւնները: Զայաստանի իշխանութիւնները նշում կը բանեցնեն ԼՂի ղեկավարութեան վրայ, իսկ Արցախի ղեկավարութիւնը միաձայն կեցուածքով ժխտական տրամադրութիւններ ցոյց կու տայ այս պարտաւորական նախաձեռնութեան նկատմամբ: Արցախի ժողովուրդը բացարձակապէս միաձայն է իր ղեկավարութեան հետ:

Այսպիսով առայժմ կը յետաձգուի Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պաշտօնական պատասխանը:

Լ Ը Ա Ք Ա Ղ

ՅՈՒՆԻՍՏԱՆ

ՄՈՒԹԵՆԿՐՈՅԻ (Մարտիկոնի) նախագահ Մամիր Պուլաթովի վաղը միտքայ այցելութեամբ Աթենք կը ժամանէ. Յունաստանի կառավարութեան հրաւերով: Ան հանդիպում պիտի ունենայ վարչապետ Միցոպաֆիսին հետ:

ԳԱՆԱՏԱՅԻ Էսֆրաններու արուեստի մուշներ ցուցադրութեան պիտի դուրսն էլան Վազինա Սփիրափուրա» բանգարանին մէջ, ուր պիտի ներկայացուին 130 արուեստի գործեր: Յացադրութիւնը պիտի տեւէ մինչեւ յունիս 5:

ՄՇԱԿՈՅԹԻ նախարար տիկին Տորա Պաֆոսեանի ներկայացուց իր նախարարութեան «Աթենք: պատմութեան եւ ֆալգապետութեան նամակներ» ծրագիրը, որ պիտի փնտրուի «Տրորի երկրորդ թղթածրար»-ի հաշտոյն:

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ Արդիւրի Մալիարեխի 10 տարեան բանտարկութեան դատապարտուեցաւ, Եորդոս Գոսոբասին ապաստան տուած ըլլալու եւ 1988ին Յունաստանէն անոր փախուստին օգնած ըլլալու ամբաստանութեամբ:

ԹԵՍՍՍՎՈՆԻԿԻ մէջ, երկրորդական վարժարանի անգլերէնի ուսուցչուհի մը եւ չորս այլ անձեր ձերբակալուեցան, որովհետեւ անոնց մօտ թմրեցուցիչ գտնուած էր:

ԵՐԵՎԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԿԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ 250-000 տրախմի գումար մը: Գործըր առաւօտեան ժամերուն բնակարանի մը դուռը կոտրելով ներս մտան, խորհելով որ այդ ժամուն տունը մարդ չի գտնուիր. սակայն անակնկալի եկան, երբ տան մէջ դէմ դիմաց գտնուեցան 12 տարեկան տղու մը հետ: Անոնցմէ մին դանակի սպառնալիքի տակ անշարժացուց տղեկը, մինչ միւսները տունը խուզարկելով գտան դրամը եւ անհետացան:

ՄԻՋԱՍՏՐԱՅԻՆ

ԻՆՉՊԵՍ արդէն կը սպասուէր, երկրորդ ֆառամակի համար իր պաշտօնին վրայ վերընտրուեցաւ Իրանի նախագահ Զաքեմ Բաֆանանի:

ԳԵՐՄԱՆԻՅՈՅ Կարչապետ Հելմուտ Գոլ մտաւորութիւն յայտնեց, որ Պալմանեան երկիրները կրնան աւելի անկայուն դառնալ գաղթականներու խումբի հետեւեւեմով, երէ պատերազմ տարածուի դէպքի նախկին Եւրոպայից հարաւային շրջանները: Պուլկարիս երկրորդ այցելութեան աւարտին մամիոյ ասուլիսի ընթացքին Գոլ յայտնեց, որ Գերմանիա բնաւ պիտի չընդունի ուժի միջոցով ժողովուրդներու տեղահանութիւնն ու սահմաններու փոփոխութիւնը:

20 ՀՈՒԻ գոն գացին եւ 8 հոգի վիրաւորուեցան Հնդկաստանի հիւսիսը գտնուող Գաշմիր նահանգին մէջ, երբ իրարու բախեցան երկու հանրակառէր, որոնք ուխտաւորներ կը փոխադրէին դէպքի հիմուններու մայր շատուածուհիի ազօրատեղին:

ԻՍՐԱԵԼԻՆԵՐ 86 հրէական գերեզմանաւարներ կոտորեցին եւ Ողջակիզումին նուիրուած յուշատախտակ մը ֆանդեցին Ֆրանսայի հարաւ - արեւմտեան Փերփիլիան ֆալգափն մօտ:

ԻՏԱԿՈՅ ռատիկանութիւնը չորս ֆալգափներու մէջ մափայլի դէմ գործողութիւններու ձեռնարկեց, որոնց ընթացքին ձերբակալուեցան 13 հոգի, ներառեալ՝ անցեալ ամիս ձերբակալուած մափայլի բարձրաստիճան ղեկավարի մը եղբայրը:

ԳԱՄՊՈՏՏՈՅ մէջ լարուած կացութիւն կը տիրէ: Վարչապետ Զուս Սէն կը մերժէ ընդունիլ ընտրութեանց արդիւնքը, որոնց ընթացքին իր կուսակցութիւնը պարտութիւն կրած էր:

ԳԵՐՄԱՆԻՅՈՅ արտաքին գործոց նախարար Գլաուս Գինէլ 622ի վրայ 545 ձայնով Ազատ Գերմանական Կուսակցութեան ղեկավար ընտրուեցաւ:

ԵՐԿՐՈՒ Գերմանացի գրօսաչրջիկներ գոն գացին եւ բազմաթիւ ուրիշներ վիրաւորուեցան, երբ իրենց հանրակառէր բախեցան բրիտանական զինուորական ինքնաշարժի մը, Միտրալետի մը:

ՍԱԿԱՏՏՈՅ ռատիկանութիւնը յայտնաբերեց աւելի քան 6 թուն Բոֆային, 205 միլիոն տոլար արժողութեամբ: Ասիկա ամենէն լայնածաւալ յայտնաբերումն է կեղոնական Ամերիկայի պատմութեան մէջ:

ՆԱԹՕԻ ժողովին մասնակցելէ ետք Մ. Նահանգներու պետական ֆարտուղար Ռուրըն Բրիտտօփը շաբաթ օր մեկնեցաւ Անգարա, ուր օղակայանին մէջ դիմաւորուեցաւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Հիւմէթ Չեքիլի կողմէ:

10 ՀՈՒԻ մահուան դատապարտուեցան Գուլթի մէջ 1990ի իրաքեան ներխուժումին օգնած ըլլալու յանցանքով:

ԳԵՐՄԱՆԻՅՈՅ արտաքին գործոց նախարար Գլաուս Գինէլ յայտնեց, թէ Գերմանիա ՄԱԿի Ապահովութեան հորիւորդին մէջ մնալուն անդամ պիտի դառնայ, հակառակ շատերու կողմէ յայտնուած կակաւածին:

ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԵՄ ՍՏՂՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

(Ա)
ժողովրդավարական սահմանադրության եւ պաշտօնատար անձնաց պատասխանատուութիւն սահմանող օրէնդրութեան բացակայութեան պայմաններում կառավարման նախագահական համակարգը միշտ էլ յղի է բռնապետութեան վերածուելու իրական վտանգով: Իր ձեռնարկ գրեթէ անսահմանափակ իշխանութիւն կուտակած նախագահը դրա համար ոչ մի առիթ բաց չի բողոքում:

Այսպէս, բաւական էր ՀՀ Գերագոյն խորհուրդը ձեռնամուկ լինելը իր աշխատակարգը բարեփոխելուն, որ նախագահին իսկողնի փորձեր այդ բարեփոխումների պատրուակով իր համար կորզել Գերագոյն խորհրդի որոշումների նկատմամբ վերջնի (արգելի) իրաւունք: Այն ժամանակ նախագահին ընդամենը մի բանի ձայն պակասեց Գերագոյն խորհրդին վերջնականապէս դիմադրելու համար:

Իսկ այդիկ Տին նախագահը իր «նախաձեռնող խմբի» միջոցով անցաւ նոր «նախադրական գրոհի»՝ փորձեց անձնական բռնապետութեան ռեժիմ հաստատել «Թագմական դրութեան մասին» օրինագծի օգնութեամբ: Փառէ Աստուծոյ, Գերագոյն խորհուրդն այս անգամ էլ յաջողեց ազատուել այդ սատանայական փորձութիւնից՝ կասեցնել «օրինագծի» ընդունումը:

«Երկիր»ը արդէն անդրադարձել է այդ խնդրին: Հարցի էութիւնը բազմակողմանիօրէն յուսաբանելու համար էլ խմբագրութեան խնդրանքով «Թագմական դրութեան մասին» օրինագիծը մեկնաբանում է իրաւաբանական գիտութիւնների դոկտոր, փրոֆեսոր ՎԱԿԻՄԻՆ ՆԱՉԱՅԱՆը:

ՀԱՄՅՈՒՄ:— Ինչո՞վ բացատրել ՀՀ նախագահի նման գործելակերպը: Զե՞ որ առանց այդ էլ նրա հսկայական իշխանութիւն ունի իր ձեռքում:

ՊՆԱՍՍՈՒՄ:— Դրա պատճառները բազմաթիւ են: Նախ, որպէս ընդհանուր օրինադատութիւն, իւրաքանչիւր բռնապետ միշտ էլ հակուած է իր իշխանութեան ծաւալի էլ աւելի ընդլայնման եւ ամէն կերպ ցանկանում է ձեւական-իրաւաբանական հիմքեր ստեղծել իր անձնական իշխանութիւնն ամրապնդելու համար:

Պետական կառավարման այն համակարգը, որն այսօր գոյութիւն ունի Հայաստանում, ընդհանուր քիչ բան ունի անգամ նախագահական հանրապետութեան հետ: Այսօրւայ փիճակով Լեւոն Տէր Պետրոսեանն օժտուած է աւելի մեծ իշխանութեամբ, քան աշխարհի մնացած բոլոր պետութիւնների նախագահները միասին վերցրած: Ըստ որում, նրա գրեթէ անսահմանափակ իշխանութիւնը որեւէ հակազուտ չունի: Չկայ ապօրինութիւնների համար նախագահին պատասխանատուութեան ենթարկելու որեւէ պետ-իրաւական կառուցակարգ (միջանկիւզ), գոյութիւն չունի ժողովրդավարական սահմանադրութիւն, նախագահի պաշտօնն արհեստականօրէն պատուաւատուած է նախկին խորհրդային սահմանադրութեան ծառայելին, չկայ սահմանադրական դատարան, հանրապետութեան ընտրովի-ներկայացուցչական մարմինը՝ Գերագոյն խորհուրդը, գոյութիւն է նախագահի վրայ ներգործելու որեւէ հնարաւորութիւնից:

Կառավարման այն համակարգը, որը ներկայումս գործում է Հայաստանում, ոչ թէ նախագահական հանրապետութիւն է, այլ հանրապետական հագուատների տակ թաքնուած արեւելեան տիպի միապետութիւն: Բացակայում է թերեւս ժառանգութեան մասին օրէնքը... Այս պայմաններում անարգել գործում է «ստորոտի դայի» է ուսելու ժամանակ» սկզբունքը, ինչի վկայութիւններից մէկն էլ «Թագմական դրութեան մասին» օրինագիծն էր:

Պակաս խթանիչ չէ եւ այն հանգամանքը, որ նախագահին ու նրա համախոհներին 1991 թ. աշնանը յաջողուեց, օգտուելով ժողովրդական լայն գանդուածների ու հենց ՀՀ Գերագոյն խորհրդի պատգամաւորների զգալի մասի իրաւաբանական անտեղեկութիւնից, ստանալով ժողովրդի սահմանադրական կամքը եւ մի սովորական օրէնքով վերացնել երկրում հաստատուած ու ՀՀ Անկախութեան հռչակագրով ամբողջութեամբ կառավարման խորհրդարանային համակարգը եւ կողոպտել այն նոյն Գերագոյն խորհրդի վաղորութիւնների մեծ մասը: Իսկ յաջողուած ապօրինութիւնը միշտ էլ յուսադրող է եւ ոգեշնչող...

Միս կողմից, նախագահի հեղինակութեան շեշտակի անկումը նրան ստիպում է վաղօրոք իրեն ապահովել յուսալի իրական լծակներով եւ անյաջողութեան դէպքում ազգական կամ արտակարգ դրութիւն յայտարարելու միջոցով երկարաձգել իր իշխանութիւնը: Դա է վկայում Գերագոյն խորհրդի կողմից մերժուած այս օրինագիծը:

— Իսկ ի՞նչ կ'աւելիք նման օրէնք ընդունելու անհրաժեշտութեան մասին:

— Թէ՛ ազգական կամ պատերազմական դրութեան եւ թէ՛ արտակարգ դրութեան մասին օրէնքներ ընդունելու անհրաժեշտութիւնը որեւէ կասկածից դուրս է: Սակայն խնդիրն այն է, թէ ինչ օրէնքներ են լինելու դրանք եւ ինչ նպատակի են ծառայելու:

Միանգամայն անթոյմարելի է նման պատրուակի տակ որեւէ մէկի անձնական բռնապետութեան ռեժիմի հաստատումը: Մարդկութեան դատը փորձը վկայում է, որ նման հնարք գրեթէ բոլոր բռնապետների գործելակերպի անբաժան մասն է: Ըստ որում, նման հանգամանքներում բռնապետներն իրենց գործողութիւնները բողոքելու են երկրում կարգուկանոն հաստատելու, ժողովուրդին փրկելու կամ նրա համար երջանիկ ապագայ ապահովելու կարգախոսներով: Համոզուելու համար բաւական է ուշադիր կարգաւ Աստուծոյ չիթերի «Իմ պայքարը» գիրքը, որտեղ ֆալստատական բռնա-

ԳԱՂՈՒԹԷ

Պոլսահայ

Երաժշտահանդէս

Միմար Սինան համալսարանի պետական երաժշտանոցի աշակերտներու սենեկային նուագախումբը, 18 մայիսին ունեցած է իր համերգը, յիշեալ համալսարանի լսարանին մէջ, ուր մեկնարանուած են Վիվալտիի, Մոցարթի եւ Պայթոբի գործերը:

Թաւջութակով համերգին մասնակցած է հայ արուեստագիտուհի՝ Գարօլին Էօզէրը: *******

Պուլկարահայ

Նոր Հրատարակութիւն

Պուլկարից մէջ հիմնուած «Արարատ-Սփորթ» հիմնադրամի կողմէ լոյս ընծայուած է նոր հրատարակութեան մը «Մեծ տոճ եւնք մենք» խորագրով:

Գիրքը կ'ամփոփէ պուլկարահայ չորս աշխարհահռչակ մարզիկներու՝ Յ. Պրայէրեանի, Ն. Նուրիկեանի, Ա. Արապաճեանի եւ տղթ. Բ. Գասպարեանի նուիրուած ծաւալուն ակնարկներ: Գրքին հեղինակն է լրագրող Բ. Վելիչըրով: Նախարար ստորագրած է Պերճ Ինճեկեան:

Այդ առթիւ կայացած է նաեւ մամուլի ասուլիս, ուր ակրոստիկոսը «հիմնադրուած» է որպէս գերմանական ժողովրդի փրկութեան ուղի: Թէ ինչպէս ֆալսիդը «փրկեց» գերմանացիներին՝ յայտնի է բոլորին: Պէտք եղաւ աւելի քան կէս դար, որպէսզի գերմանական ժողովուրդը փրկուէր այդ «փրկութիւնից»: Մի խօսքով, թէ՛ ազգական դրութիւնը եւ թէ՛ արտակարգ դրութիւնն ուղղակի վտանգ են բռնապետների համար:

Այժմ՝ հանդուցեալ օրինագծի մասին: Յասօք, նրա բովանդակութիւնը գրեթէ ամբողջութեամբ չունի ո՛չ ազգական (պատերազմական) եւ ո՛չ էլ արտակարգ դրութեան հետ:

Այսպէս, այդ դրութիւնների ժամանակ երկրի քաղաքական, տնտեսական եւ սոցիալ-մշակութային կեանքը դուրս է գալիս իր բնականոն հունից, եւ անհրաժեշտութիւն է առաջանում համախմբել երկրի բոլոր երեք իշխանութիւնների՝ թէ՛ օրէնսդիր, թէ՛ գործադիր եւ թէ՛ դատական մարմինների ներուժը, նրանց ջանքերը կենտրոնացնել երկրի առջեւ ծառայած ազգական (պատերազմական) կամ արտակարգ ինքնիշխան լուծման համար: Մինչդեռ օրինագիծը պահանջում է փաստօրէն վերացնել երկրում գործող երեք օրինական իշխանութիւններից երկուսը՝ օրէնսդիր ու դատական իշխանութիւնները, եւ ողջ իշխանութիւնը կենտրոնացնել մէկ անձի՝ Հանրապետութեան նախագահի ձեռքում, թերեւս հիմք ընդունելով նրա՝ միակ ազգանուէր անձ լինելու կանխավարկածը... Թէ՛ դա ինչի կարող է յանդէսնել՝ ակնյայտ է:

— Իսկ գոյութիւն ունե՞ն արդեօք, նման օրէնքների անազադրուող միջազգային-իրաւական պահանջներ:

— Անշուշտ կան: Արտակարգ կամ ազգական (պատերազմական) դրութիւն հաստատելու մասին օրէնքները պէտք է համապատասխանեն միջազգային իրաւունքի հանրահանաչ նորմերին եւ սկզբունքներին: Մասնաւորապէս, համաձայն 1966 թ. դեկտեմբերի 19ի՝ «Քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքների մասին» միջազգային պակտի (յօդ. 4), արտակարգ դրութիւն կարող է յայտարարուել միայն ազգի գոյութեան համար իրական վտանգի առկայութեան դէպքում: Բացի այդ, արտակարգ դրութեան պայմաններում փաղաքացիների իրաւունքները եւ ազատութիւնները կարող են սահմանափակուել սակայն այդ դրութեան սրութեանը լիովին համապատասխան:

Միջազգային իրաւունքի հանրաճանաչ նորմերից եւ սկզբունքներից ուղղակիօրէն բխում է, որ ներքին քաղաքական անկայունութիւնը, պատերազմական փիճակը կամ դրա սպառնալիքը, ինչպէս նաեւ որեւէ այլ արտակարգ իրադրութիւն չեն կարող քաղաքացիների կեանքի, իրաւաստիքների կառավարման օրէնքի հիման վրայ դատաւարտուելու, յանցանքի կատարման պահին գործող օրէնսդրութեամբ սահմանուածից աւելի ծանր պատիժ շտաանայու, տանջանքներից մարդու արժանապատուութիւնը նեմացնող գործողութիւններից զերծ մնալու իրաւունքների սահմանափակման հիմք ծառայել:

Միջազգային իրաւունքը սահմանում է նաեւ արտակարգ դրութիւն յայտարարելու որոշակի ընթացակարգ. այն յայտարարող պետութիւնը պարտաւոր է ՄԱԿի գլխաւոր քարտուզարի միջոցով պաշտօնապէս ՄԱԿի անդամ բոլոր պետութիւններին տեղեկացնել նման դրութիւն յայտարարելու պատճառների եւ դրա սրութեանը համապատասխան ազատութիւնների սահմանափակումների մասին: Օրինագիծում, անշուշտ, պէտք է չլուծ լինէր միջազգային, իրաւունքի վերը նշուած սկզբունքներին, ինչը, ցասօք, բացակայում է:

(Մնացեալը յաջորդով)

ԳԱՂՈՒԹ

Նշուած է թէ ժողովուրդային լոյս պիտի տեսնեն զրբի հայերէն եւ անգլերէն թարգմանութիւնները: *******

Աշակերտական շամբար

Փագարճիքի դպրոցական հոգարարութեան եւ Փլովտիլի Հ. Մ. Լ. Մ. ի կազմակերպութեամբ 5-10 սպորտի «Սորբենան» եւ «Վ. ու Գ. Թիթիւնճեան» վարժարաններու աշակերտութիւնը ունեցած է շամբար մը «Յիմով Չարկ» հանգստատան մէջ:

Աշակերտները անցուցած են հաճելի ժամեր, ունեցած են պտոյտներ եւ սորված առաջին բուժ-օգնութեան անհրաժեշտ գիտելիքներ: *******

Գանատահայ Դասախօսական Երեկոյ

Թորոնթոյի Ս. Սաչ ազգային վարժարանի հոգարարութեան կազմակերպութեամբ, 16 մայիսին տեղի ունեցած է դասախօսական երեկոյ մը, ուր կ'ըլլէր ունեցած է դոկտ. Աւետիս Պոզոսեան:

Բժիշկը սահիկներով եւ պատկերիկով ցուցադրած է Հայաստանի երկրաչարժի հետեւանքները, ժողովուրդի աւորեան: Ան տուած է իր մեկնարանութիւնները եւ տպաւորութիւնները: *******

Գինեձօն

Թորոնթոյի Ս. Երրորդութեան հայց. առաքելական եկեղեցւոյ ներքնաարահին մէջ, 14 մայիսին տեղի ունեցած է գինեձօն մը պրն. Ժիրայր Փետրեանի «Armenia under Arab occupation (640-886, A. D.)» գիրքին նուիրուած:

Ներկայից ներկայացուցած է պրն. Մ. Սկրտիչեան, իսկ գիրքի բովանդակութիւնը ներկայացուցած է պրն. Հայկ Սելեան: Աւարտին իր խօսքը փոխանցած է հեղինակը: *******

Ամերիկահայ ՀՕՄԻ 83րդ Տարեդարձ

Հայ Օգնութեան Միութեան 83րդ տարեդարձի տօնակատարութիւնը՝ հովանաւորութեամբ Արեւմտեան Ամերիկայի չրճանային վարչութեան, տեղի ունեցած է մայիսին Փաստինայի Սեքսոն հանդիսարահին մէջ:

Երեկոյթի պաշտօնական բացումը կատարած է «Համազգային»ի «Նարոտ» կանանց երգչախումբը, ղեկավարութեամբ Վաչէ Պարտուճեանի:

Հանդիսավարութիւնը կատարած է տիկին Սիրուն Տարազճեան ու բացատրած ձեռնարկի նպատակը:

ՀՕՄԻ Արեւմտեան Ամերիկայի չրճանային վարչութեան ատենապետուհի տիկին Անի Չալեան անդրադարձած է ՀՕՄԻ այդ չրճանի գործունէութեան:

Հ. Յ. Դ. Կ. Կ. խօսքը փոխանցած է Շարլ Լուսարեան, իսկ ՀՕՄԻ կեդրոնական վարչութեան խօսքը փոխանցած է ընկ.հի Մ. Սկրտիչեան:

Յայտագրի երկրորդ մասով կ'ըլլէր ունեցած է, յատկապէս այս առթիւ Հայաստանէն հրաւիրուած, «Առազատ» շարժման խմբակի խմբակիր ընկ.հի Արթուր Պետրոսեան: Բանախօսու հին անդրադարձած է Հայաստանի այսօրուան քաղաքական եւ տնտեսական կացութեան ու անոր հետեւանք հայ կնոջ դիմադրուած դժուարութիւններուն:

Ընթացքին գործադրուած է գեղարուեստական յայտագիր:

Աւարտին իր պատգամը տուած ու կատարուող սրբազան աշխատանքը գնահատած է Թեմի առաջնորդ Տաթևաարք. Սարգիսեան: *******

Կոմիտասը Յաւերժացնող Գեղջկական Երգերը CDով

«Համազգային»ի «Նարոտ» երգչախումբի ու անոր գեղարուեստական տնօրէն Վաչէ Պարտուճեանի ճիգերուն շնորհիւ, նոր լոյս տեսած է Կոմիտասի գեղջկական երգերու ձայներին ու CDն:

Շուրջ 52 վայրկեան տևողութիւն ունեցող CDն կը պարունակէ չորս տարբեր փիճակներ՝ բնարական խմբերգներ, երգեր, պարերգեր, ծիսական եւ աշխատանքային երգեր: Երգերու կատարողութիւնը խնամուած է, ուղղափառ մնալով բնագրի ցուցմունքներուն:

CDին կցուած է զրբոյկ մը, մատենագրական ծանօթութիւններու եւ երգերու ամբողջական հաստատմանը ընտիր տպագրութեամբ, որուն անգլերէն թարգմանութիւնները խմբագրուած եւ համադրուած են Բաժնի Ալթեանի կողմէ:

Հ. Կ. ԽԱՉԻ «ՌՈՒՔԻՆԱ» ՄԱՍՆԱՃԻԻՂԻ ՎԵՐՋԻՆ ԶԵՆՈՒՄԿՆԵՐԸ

Հ. Կ. Խաչի «Ռուքինա» մասնաճիւղը վերջին շրջանին ունեցած երկու ձեռնարկները՝ «Մայրերու օր»-ուան նուիրած հանդիսութիւնն մը եւ Համբարձման տօնին առթիւ անդամական պատոյտ մը:

Առաջին ձեռնարկի՝ «Մայրերու օր»-ուան հանդիսութեան միացած էր նաեւ «Ռուքինա» մասնաճիւղի անդամական ժողովը, որուն բացումը կատարեց եւ վարչութեան աշխատանքներուն շուրջ զեկուցեց ընկ՝ Սայրի Բէհեան: Իր բացման խօսքին մէջ անդրադառնալէ ետք ձեռք բերեց եւ ղեկին ընկերութեան մէջ, ընկերու հին հրատարակչութեան զատկան հին ընկերու հին Վրահի Օննիկեան-Շահինեանը ներկայացնելու իր նիւթը:

Ընկ՝ Շահինեան նիւթին ծոցեցաւ հետեւեալ անկիւնն «մեզմէ խրատաւորը» ըսաւ ան, «բանի մը վարկեանի շնորհիւ, ինք իր անձի մասին թող մտածէ ոչ իրրեւ մայր, այլ իրրեւ դուստր: Եւ շարունակելով ան ըսաւ. «Վատահարաբ շատ դաստիարակութիւններ լսած էք մայր-գաւակ փոխ յարաբերութեան, փոխադարձ դաստիարակելի ղեկին եւ զակին հետ մօր մը ունեցած անբարեկեցիկ կապին մասին, որ մայրութիւնը կը բնորոշէ: Եթէ մտածենք թէ այս բոլորը մենք արդէն սպարած ենք իրրեւ մօր մը գաւակները, այն ատեն կրնանք տեսնել նաեւ Հարցին մէկ ուրիշ երեսը՝ թէ մայրութիւնը շարունակուող ընթացք մըն է եւ թէ ոչ մէկ մայր իր ստանձնած հսկայ բեռին մէջ առանձին չէ:


Ապա ընկերու հին ընդգծեց այն դերը կամ ազդեցութիւնը որ ամէն մայր կ'ունենայ իր զակին վրայ: Այդ ազդեցութեան գիտակցութիւնը որոշ տարիքէ մը ետք կրնանք ունենայ միայն փոքր տարիքին կամ կանուխ երիտասարդութեան շրջանին այդ մասին չենք մտածեր բնաւ: Ուրեմն հարցը դիտելով վեր ոչ մենք՝ իրրեւ մայր ու մեր գաւակները, այլ մենք ու մեր մայրերը»:

«Այն ինչ որ հոգեբանները կ'անուանեն «մայրութեան իշխանութիւն» եւ կը սահմանեն իրրեւ մայր-գաւակի միջեւ գոյութիւն ունեցող շարժումն կապ, հոգեկան հաւասարակչութիւնն կու տայ անձին, որմէ զրկուիլը շատ մեծ հոգեբանական հարցեր կը ստեղծէ ենթակային համար:

«Մենք եւ մեր մայրերը» կամ «մեր մայրերու ներկայութիւնը մեր մէջ» այս մասին խօսելով ընկ՝ Շահինեան անդրադարձաւ կեանքի տարբեր հանդիսաններուն մօր դերին մասին մեր ունեցած տրամադրութեանց: «Երբ երեխայ ենք, ըսաւ ան, կը պաշտենք մեր մայրերը. երիտասարդ տարիքին՝ կը սկսինք հարցակարնի տակ առնել զայն, որովհետեւ ան մեզ կը կաշկանդէ, իսկ որոշ տարիքէ մը ետք՝ կը սկսինք բռնել, բացատրել, կամ ընդունիլ անոր վարձուքը եւ վերջապէս, ամէնէն վերջ, իրրեւ ծնողք մենք այլ մեր կարգին կը կրկնենք նոյնը...»

Եզրակացնելով իր նիւթը դաստիարակչութեան մարտնչութեան որ «չբացակայի մեր շուրջ իրրեւ հայ կիներ, ու աշխարհի բոլոր կիներ, որ ընտանեկան օճախը փոստ պահելու կամ ընդմիջ տարկու անդիմադրելի ուժը ունիք»:

Մայրերու նուիրումը այս ձեռնարկը ունէր նաեւ օրուան պատշաճ յայտարարութիւն, որու ընթացքին երգով ու նուագով հանդէս եկան Մկրտիչ Պողոսեան, Վահան Մկրտիչեան, Յակոբ Աւագեան եւ Յովիկ, որոնք խանդավառ պահեր ստեղծեցին սրահէն ներս: «Ռուքինա» մասնաճիւղի վարչութեան ընկերու հինները, որոնց կողմէ պատրաստուած էր նաեւ օրուան պատշաճ հիւրասիրութիւնը, ճիշդ շնանայեցին ձեռնարկի յաջողութեան ի խնդիր, որուն համար այլ կը շնորհատրեմք զիրենք:



Ինչպէս բարեւոյց այս գրութեան մուտքի բաժնով, Թիքոֆ «Ռուքինա» մասնաճիւղը կազմակերպեց նաեւ Համբարձման տօնին առթիւ պատոյտ մը, որ տարիներու ստիպումներն զարձակ է աւելու: 27 մայիսին յիսուն կապուտ խաչուհիներ մեկնեցան ղեկի Նափոյիլոյ ծովափը, ուր անցուցին հաճելի միջոցառում՝ աւանդական զարձակ Համբարձման վիճակածը-գութեամբ եւ այլ անակնկալներով:

Յատուկ կային համար վարչութիւնը ծրագրած է եւ պիտի գործադրէ ծովու լողաւորները, որոնք ամբարն շրջանին կը կազմակերպուին շրջանի անդամներուն կամ բոլոր փափաքողներու մասնակցութեամբ:

ՓՈՎԵՐՈՒ ՄԱՍԻՆ

- Փոկը կարծր մագեր ունի իր դունչին ծայրը: Անոնք շատ զգայուն են: Անոնք փոկին կարելիութիւն կու տան իր որսին տեղը ճշդելու, առանց անոր դաշնելու, երբ ան կ'որսայ մուր ջուրերու շրջաններու մէջ:
- Ծնունդի ժամանակ, պզտիկ փոկը 12 ֆիլոկրամ կը կշռէ: Ան շատ շուտ կը գիրնայ: Մէկուկէս ամիս ետք, ան կ'ունենայ չափահաս փոկի մը ծանրութիւնը եւ հասակը՝ 180 ֆիլոկրամ եւ 1-80 մեքր:
- Փոկը կրնայ բաւական ատեն ջուրին տակը մնալ՝ առանց շնչելու -20 վայրկեան, 300 մեքր խորութեան մէջ: առիկա կարելի է, որովհետեւ անոր սիրտը կը սկսի շատ դանդաղ գարնել:
- Փոկը կրնայ ֆնանալ ջուրին մէջ: Անոր ճարպի խաւը անելի հասա է իր ետեւի թաթերուն հով: Այս ձեւով ան կրնայ ծփալ ուղղահայեաց ձեւով:
- Չափահաս փոկը օրական մինչեւ երկու ֆիլոկրամ

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՀԱՄԱԿԱՐԳԻԶԸ ԱՄԷՆ ՏՈՒՆԷ ՆԵՐՍ ՊԻՏԻ ՄՏՆԷ

Երեւակայէ, որ համակարգիչի առջեւ, նստած, վիտէ-օ-հանդիպում մը կ'ունենա ընկերոջը հետ եւ կը խօսակցիս, կամ՝ անոր բազմալեզու բառարանին մէջ բառեր կը փնտրես, որոնք կ'արտասանուին համակարգիչին կողմէ: Կամ՝ ընկերութեանը տնօրէնին տարեկան դասախօսութիւնը մտիկ կ'ընես, որ «Երեկ տարական նամակով» կը դրկուի բոլոր պաշտօնեաներու համակարգիչներուն:

Համակարգիչներու նոր ճարտարագիտութեամբ, այսօր այս բոլոր գործողութիւնները, սկսած են կարելի դառնալ: Անոր միջոցով, համակարգիչները պիտի կարենան ձայն, նկար, գրութիւն, գծագրութիւն, շարժուն պատկեր եւ կատարել յստակութեամբ նկարներ խառնելով, տեղեկութիւններ ուղղարկել կամ ընդունիլ, կամ՝ համակարգիչը վերածել փոքր գիտաշխատանքի մը, ուր վերոյիշեալ նիւթերուն կապակցութեամբ ամէն գործողութիւն կը կատարուի:

«Մաթիմատիկա» այս երեւոյթին մասին այնքա միայն պիտի յիսուուի, այլ պիտի գործածուի առօրեայ կեանքի մէջ: Այս նոր ճարտարագիտութիւնը ուսումնասիրողները կ'ըսեն, որ անոր շուկան շատ արագօրէն պիտի ընդլայնի եւ բազմաճանայ: Կը սպասուի, որ Եւրոպայի մէջ, մինչեւ 1996 թուականը, սպառողական ապրանքներու 4-10 միլիառ տոլարի շուկայ մը ստեղծուի: Յիշեցնենք, որ Եւրոպայի մէջ անցեալ տարի «մաթիմատիկա»-ի շուկան սպառեց միայն 190 միլիոն տոլարի ապրանք:

Իսկ Հիւսիսային Ամերիկայի մէջ, մինչեւ 1995 թուականը, կը նախատեսուի, որ «մաթիմատիկա»-ի շուկայի սպառումները հասնին 13 միլիառ տոլարի (անցեալ տարի 3-8 միլիառ տոլար էր):

Մինչ էփըլ ընկերութեան «միքրոնո»-ն անձնական համակարգիչներու ուրիշ ընկերութիւններ իրար հետ կը մրցին այս գծով: Իսկական մրցակցութիւնը Գոուտորի Սի-Տի-Ռի-Վի-ին (ֆոնփեք տիսփ Ելէլիփոն) եւ Ֆիլիպսին Սի-Տի-Ային (ֆոնփեք տիսփ ինքրեքֆու) միջեւ է: Միւս կողմէ, նիքրէնտո եւ սէլա խաղերու մեքենաները արտադրող ընկերութիւններ կ'ըսեն, որ ծրագրած են իրենց արտադրութիւնները ձայներով եւ ցայտուն պատկերներով աւելի հարստացնել շուկային մրցակցութեան մէջ:

«Սի-Տի-Ռի-Վի» եւ «Սի-Տի-Այ» ֆոնփեքն ձեռքով համակարգիչը տունէն ներս կը մտցնեն ֆոնփեք տիսփ մեքենայի կեպարանով: Անոր նպատակը դաստիարակչական եւ զբաղումի համար է», կ'ըսէ այս հարցը ուսումնասիրող անձ մը:

Օրինակի համար, Սի-Տի-Ռի-Վի կրնայ ձայն, պատկեր, շարժուն նկար, գծագրութիւն եւ գրութիւն իրարու միացնելով, մէկ ամբողջութեամբ հրահանգել դիտողին: Ռիմոք ֆոնփեքով մը կարելի է որեւէ նիւթ ընտրել եւ այդ նիւթին մասին գրութիւն, ձայն, վիտէօ պատկերներ, եւ այլն, որոնք կ'երեւին պատկերասփիւռին պատուանդին վրայ: Այս բոլորը կը կարողացուին մէկ ֆոնփեք տիսփ վրայէն: Այլ խօսքով, էլեկտրոնիկ արագ համայնագիտարան...:

Անցեալ տարի, «մաթիմատիկա»-ի նուագագոյն պէտքերը որոշուեցան Մայքրոսոֆթ եւ Ինտել ընկերութիւններուն կողմէ:

«Մաթիմատիկա» գործի լծելու համար, պէտք է ունենալ 386 մայքրոփրոսէլըր Սի-Տի-Ռի-Վի կոշտող մեքենայ մը եւ ձայն փոխանցող էլեկտրոնիկ բաժնի մը:

Այս երեքը ունեցող համակարգիչ մը կրնայ շարժուն պատկերներ եւ ձայն արտաբերել ինչո՞ւ պատկերասփիւռներուն նման, սակայն այս պարագային, կարելի պիտի ըլլայ պատկերները կեցնել եւ անոնց մէջ փոփոխութիւններ մտցնել:

Ընկերութիւնները կը հաւատան, որ մինչեւ 1996 թուական, Սի-Տի-Ռի-Վի գինը 620 տոլարէն պիտի իջնէ 120 տոլարի:

Համակարգիչներուն տարածման ուրիշ պատճառ մըն է նաեւ Մայքրոսոֆթ ընկերութեան արտադրած «Ուինտոզ» ծրարը, որ «մաթիմատիկա»-ի բազմաթիւ կարողութիւններով օժտուած է: Յատկապէս տարի, «Ուինտոզ Էն-Ռի» ծրարին մուտքով, անոր կարողութիւնները պիտի աւելան:

Միւս կողմէ, էփըլ համակարգիչին «Քուիք Բայմ մաթիմատիկա»-ն գործածելով, կարելի է վիտէօ պատկերներ, ձայն կամ շարժուն պատկերներ ներկել, ընդօրինակել, կտրտել եւ ուզուած վերջնական ձեւի մը վերածել: Այս բոլորը համակարգիչին յիշողութեան մէջ: Գործը վերջանալէ ետք միայն, կարելի է ամբողջութիւնը վերջնականապէս արձանագրել:

Եկած է ժամանակը, երբ աման գիններով պիտի ունենանք արագ գործող համակարգիչներ եւ Սի-Տի-Ռի-Վի, որոնք միջոցով ձայնի եւ վիտէօ պատկերներու հետ «խաղալը» դիւրին պիտի ըլլայ: Այսինքն՝ այն ինչ որ միայն յատուկ սփիւտներ կրնային ընել անցեալին, այսօր այնքա ամէն մարդ պիտի կարենայ ընել, իր երեւակայութեամբ եւ պէտքերէն թելադրուելով: Մ'ի միայն այս բոլորը, այլեւ՝ համակարգիչով կարելի պիտի ըլլայ ձայններուն եւ շարժուն պատկերներուն մէջ փոփոխութիւններ կատարել, ինչպէս՝ գոյն փոխել, անձ մը նկարել դուրս հանել եւ այլն:


«Մաթիմատիկա»-ի այս կարողութիւններով, համակարգիչները եւ նման կազմածները շուտով պիտի տարածուին բոլոր գրասենեակներէն ներս:

ձուկ, կակղամորթ եւ խեցեմորթ կենդանիներ կ'ունենան: Պզտիկ փոկին մարմինը ծածկուած կ'ըլլայ ներսակ մուշտակով: Ծնունդէն ամիս մը ետք, անոր երկար մագերը կը թափին: Մարմինը կը ծածկուի սառուն, մոխրագոյն եւ ջուր չբախանցող մուշտակով մը:

ԱԶԳԱՅԻՆ «ՁԱԻԱՐԵԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆ ԱՄՍՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ

հովանաւորութեամբ՝ ԹԵՄԻ ԲԱՐԵՋԱՆ ԱՌԱՋՆՈՐԿ ՏԷՐ ՍԱԶԱԿ ԱՊԿ ԱՅՎԱԶԵԱՆԻ

Տեղի կ'ունենայ, շաբաթ 19 յունիս 1993ի երեկոյեան ժամը 7-30ին, վարժարանիս գոց մարզադաշտին մէջ: Կը հրաւիրուին ծնողները եւ կրթատէր ազգայինները: Տնօրէնութիւն




ՀՐԱԽԻՐ ՄԻՋ-ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Հ. Կ. Խաչի շրջանային վարչութիւնը կը հրաւիրէ իր բոլոր անդամները միջ-անդամական ժողովի մը որ տեղի պիտի ունենայ չորեքշաբթի 16 յունիսին երեկոյեան ժամը 6ին «Է. եւ Ս. Յակոբեան» վարժարանի «Թ. եւ Ռ. Աւետիքեան» սրահին մէջ:

Անդամներու ուշադրութեան կը յանձնենք որ այս հանդիպումին պիտի ներկայացուի սեմինարի վերջին նիւթը, «Ժողովավարական կանոններ» որ պիտի ներկայացնէ ընկերու լիԶԱ ԱԻԱԳԵԱՆ:

Փափաքողի է անդամներու ներկայութիւնը, նկատի ունենալով սեմինարի նիւթին օգտակարութիւնը:


Հ. Կ. Խաչի շրջ. վարչութիւն



ԶԲՕՍԱՊՏՈՅՏ ԴԷՊԻ ԻՏԱԿԻԱ

Կազմակերպուած Հ. Կ. Խաչի շրջանային վարչութեան կողմէ: Տեղի կ'ունենայ յուլիս 2էն 10: Հետաքրքրուողները կրնան հեռաձայնել 98 16 935 թիւին:

Վարչութիւն



Ա Մ Ա Ր Ա Ն Ո Յ '93

Հ. Գթ. Խաչի Մակեդոնիոյ եւ Թրակիոյ հայկական ամառանոցը այս տարի պիտի գործէ կինգ շաբաթներու ժամանակաշրջանով: Դարձեալ պիտի ըլլան երկու շրջաններ:

1- Ատաջին շրջանը յուլիս 10էն մինչեւ 31 (3 շաբաթներ), նախակրթարանի (8 տարեկանէն վեր) եւ միջնակարգ վարժարանի առաջին երեք դասարաններու կրտսերներու համար: Մասնակցութեան սակ 65-000 տրլիւն:


2- Երկրորդ շրջանը օգոստոս 1էն մինչեւ 15 (2 շաբաթներ) միջնակարգ վարժարանի երեք վերջին դասարաններու երիտասարդներու համար: Մասնակցութեան սակ 45-000 տրլիւն:

ԾԱՆՕԹ- Միջնակարգ վարժարանի տղաքը կրնան մասնակցիլ երկրորդ շրջանին միայն եթէ մէկ կամ երկու շաբաթով մասնակցած են առաջին շրջանին եւս:

Արձանագրութիւններու համար խնդրենք դիմեցէ Հ. Գթ. Խաչի տեղական մասնաճիւղերու վարչութեանց, մինչեւ յունիս 25:

Արեւելեան ամառանոցին մասնակցողներու ուշադրութեան կը յանձնուի, որ անոնք որոնք կը փափաքին մասնակցիլ կրնան դիմել 92 30 397 թիւին:

Հ. Գթ. Խ. Մակեդոնիոյ եւ Թրակիոյ շրջ. վարչութիւն



«ՓՈՐՔԻ» ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

(Որնէ Փիօ փողոց թիւ 1, հայ կաթողիկէ ձեռնարկին դիմացը) Վերաբացուած է պրն. Վրէժ Գալայեանի խանութը նոր տնօրէնութեամբ եւ նոյնքան խանութուած առաջնակարգ ապրանքով: Այցելութիւն մը կը բաւէ համագուելու համար: Խանութի նոր տնօրէնութիւն Համբարձում եւ Ազատուի Պէրպէրեան: Կը սպասենք ձեզ:

«ԱԶՍ ՕՐ» օրաթերթ
 խմբագրատուն՝ Սփիկոս փողոց, թիւ 54
 Նէոս Գոզմոս - Արեւիկ հեռաձայն՝ 9345237

Բաժնեգրիկ. - եռամսեայ՝ 6-750- վեցամսեայ՝ 13-500
 տարեկան 27-000- ձեռքէ հատը՝ 90 տրախմի:

«AZAT OP» (ΕΛΕΥΘΕΡΗ ΗΜΕΡΑ)
 Αρμενική καθημερινή εφημερίδα
 Ιδιοκτησία: ΧΑΜΑΣΚΑΙΝ-Μορφωτικό και Εκπολιτιστικό Σωματείο
 Γραφεία- Σφιγγός 54, Αθήνα - 117 45 ☎ 9345237
 Εκδότης-Διευθυντής Χοσθέτ Μπαρζιάν
 οδός Πύρρας 36, Νέος Κόσμος

«AZAD OR» - Quotidien Armenien
 Stigos 54, Neos Kosmos, Athenes
 Telex: AZAT GR 223684 - FAX: 9325440

«ՀԱՅՈՒՐ» ԼՐԱՏՈՒԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՌՈՒԹԻՒՆ

Նախարարը կ'այցելէ Իջեւան

Աշխատանքի եւ ընկերային ապահովութեան նախարար պրն. Եսայան այցելեց Իջեւան, ծանօթանալու համար շրջանին մէջ իր նախարարութեան ենթակայ բոլոր հիմնարկներու եւ սպասարկութիւններու աշխատանքին, եւ տեղեկանալու անոնց մտահոգութիւններուն եւ դժուարութիւններուն:

Նախարարի մասնակցութեամբ կայացաւ այդ հիմնարկներու եւ սպասարկութիւններու ղեկավարներու հանդիպումը շրջանային խորհուրդի նախագահ Ծ. Անանեանի հետ: Քննարկուեցան յիշեալ սպասարկութիւններու աշխատանքները բարելաւելու հարցեր, եղանակները անոնց առաջարկները:

Բեռներ չեն ստացուիր

Անցնող շաբթուան ընթացքին Սեւանի կայարանը ստացած է ընդամենը 28 վախճան գրքեր: «Մենք բեռները կը ստանանք Պաթմուր եւ Փոթիի նաւահանգիստներէն», յայտնեց կայարանի պետ Ի. Սարգսեան: Սակայն վերջին շրջանին բեռներ չեն հասնիր:

Քննութեան համերգ

Սեւանի երաժշտական դպրոցին մէջ տեղի ունեցաւ մամուլային քննութեան համերգը, որուն կը մասնակցէին նաեւ կառն Բաղաբի երաժշտական դպրոցի սաները: Համերգը սկսաւ «Հայր Մեր»-ով: Տերուական աղօթքի պարզ եւ անկեղծ կատարումով հանդէս եկաւ մանկական երգչախումբը: Այնուհետ յաջորդեցին Իջեւանի երաժշտական դպրոցի սաները: Անոնց բոլոր երգերն ալ պատրաստուած էին պատասխանատուութեամբ: Հոսկէ է որ կը սկսի նախաձեռնելու հարցը:

«Հոգեւոր երգերու կատարումը նորութիւն է մեր մօտ: Այդ գործին մէջ մեզ անդամակցեցին օգնութիւն ցոյց կու տայ Սեւանի հոգեւոր ճեմարանի վերակարգ. Դաւիթ Բարսեղեանը», յայտնեց Սեւանի երաժշտական դպրոցի տնօրէն Վ. Սարգսեան: Սակայն միայն հոգեւոր երգերու կատարողութեամբ չէ որ աչքի ինկան երաժշտական դպրոցի սաները: Անոնց բոլոր երգերն ալ պատրաստուած էին պատասխանատուութեամբ: Հոսկէ է որ կը սկսի նախաձեռնելու հարցը:

Հայաստանի մասին ֆիլմ

Պեկինգայի, Ֆրանսայի, Գանատայի եւ Հայաստանի հեռուստատեսութեան համագործակցութեամբ կը նկարահանուի 52 վայրկեան տեւողութեամբ նոր ֆիլմ մը՝ «Հայաստանը անցեալի եւ ապագայի միջեւ» անունով: Ֆիլմի ստեղծագործական խումբի նախագահն է Եւրոպայի եւ Մ. Նահանգներու հանդիսատեսին ներկայացնելու Հայաստանը իր անցեալով եւ յատկապէս ներկայով: Այդ բոլորը կը ներկայացուին Հայաստանի եւ Սփիւռքի ընկերային տարբեր խաւերու ներկայացուցիչներու աչքերով: Ֆիլմի բնագիրը պատրաստած է պեկինգայի լրագրող մը, որ վերջին տարիներուն յաճախակի այցելութիւններով հանգամանօրէն ծանօթացած է հայ ժողովուրդի պատմութեան, ներկայի քաղաքական ու տնտեսական իրավիճակին, հայ - արտասահմանական յարաբերութիւններուն: Ֆիլմի բեմադրիչն է գանատացի Մարք Սեփրի: Հայաստանի հեռուստատեսութեան ֆիլմի ստեղծագործական աշխատանքներուն կը մասնակցեն Մերի Զարեան եւ Գագիկ Համբարձումեան:

Ֆիլմը կը նկարահանուի Հայաստանի մէջ, իսկ յետագային նկարահանումներ պիտի կատարուին նաեւ արտասահմանի հայաշատ գաղութներու մէջ:

ԱՐԱՔ ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐԸ

ԿԸ ԲՆՆԱԴԱՏԵՆ «ԱՎԱՏԻՆ» ՖԻԼՄԸ

Ուրբ Տիգրի ընկերութեան արտադրած «Այստին» ֆիլմը, որ միլիոնաւոր հանդիսատեսներու ուրախութիւն պատճառով էր, ըստ երեւոյթի, բոլոր հանդիսատեսները գոհ չէ ձգած: Արաք ամերիկացիներու խորականութեան դէմ յանձնարարութեամբ հրապարակած է հաղորդագրութիւն մը, յայտնելով, որ ֆիլմին մէջ տեղ գտած են ցեղապաշտ եւ հակա-արաք արտայայտութիւններ:

Ֆիլմի երգերէն մէկուն մէջ կ'ըսուի. «Ես կու գամ երկրէ մը, ուր կրնան ականօղ կտորել, երէ դէմքդ չսիրեն: Բայց եղ, այդ երկիրը մեր տունն է»: Այս պարբերութիւնը մատնանշելով, արաքական յանձնարարութեամբ զիտել կու տայ, որ ամիկացեղապաշտութիւնը կը փախկնալէ եւ արաքներու դէմ տրամադրութիւններ կը ստեղծէ:

Պահելինի մէջ մամուլը ստույգի մը ընթացքին, նախկին ծերակուտական եւ ներկայիս խորականութեան դէմ յանձնարարութիւն նախագահ Զեյնա Ապու Ռոզֆ յայտարարեց, որ յանձնարարութեան ներկայացուցիչներ Տիգրի ընկերութեան հետ բանակցութիւններ պիտի սկսին եւ պիտի պահանջեն, որ փոփոխութիւններ մտցունեն ֆիլմին մէջ եւ վերջուին ցեղապաշտական արտայայտութիւնները:

«Այստին» ֆիլմը աւելի քան 200 միլիոն տոլար շահ մը ձգած է ընկերութեան: Կենտրոնի որ միջազգային շուկային մէջ ֆիլմի տարածումով յաւելեալ 600 միլիոն տոլարի եկամուտ մը պիտի ապահովուի:

«ՀԱՅՈՒՐ» ԼՐԱՏՈՒԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՌՈՒԹԻՒՆ

Ա Ր Յ Ա Խ

ԳԻՍ ԼՐԱՑՈՒՆԵՐԸ ԸՆԴՈՒՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Անցնող մայիսին, դաժան ընտրապայքարէ ետք, Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան Գերագոյն Խորհուրդը լրացուցաւ եւս 12 պատգամաւորներով: Պատերազմական գործողութիւններու սրճան պատճառով, ԼԸ Գերագոյն Խորհուրդը որոշեց անորոշ ժամանակով յետաձգել թափուր տեղերու եւ կրկնական ընտրատարածքներու ընտրութիւնները:

Կացութեան որոշ կայունացման գուզահեռ արդէն անհրաժեշտութիւն եղաւ անպայմանօրէն իրագործելու ընտրութիւնները, առաւել եւս, երբ ԳԽ վերջին երկու նստաշրջանները տեղի չունեցան, մեծամասնութիւն չզոյգանալու պատճառով: Բացի թափուր տեղերէն, ԳԽԸ ընդհանուր առմամբ 9 պատգամաւորներ, որոնք զոհուեցան Արցախեան ազատագրական պայքարի գանազան ճակատներու վրայ:

Արդէն ընդունուած ընտրութիւններու իրագործման ժամանակաւոր կանոնակարգին համաձայն Արցախի 15 ընտրատարածքներու մէջ մայիս 16ին նշանակուեցան ընտրութիւնները: Երկար սպասուած ընտրութիւնները շարդարացուցին ընտրողներու յոյսերը: Առաջին օրուան արդիւնքներով գրանցուեցան ընդամենը մի քանի թիկնածուներ որ պէս պատգամաւոր: Ինչպէս առաջին հանգրուանին, անոր յաջորդած միւս բուժարկութիւններու ժամանակ եւս արտաւայտ փաստեր եւ խախտումներ արձանագրուեցան, որոնք ընտրող են պատերազմող երկրի մը համար: Մայիս 30ին եւս տեղի ունեցան կրկնակի ընտրութիւններ: Կեդրոնական ընտրական յանձնախումբը ԼԸ պատգամաւորներ զբանցեց 13 անձեր:

Հնարաբերական ճակատագիր ունեցաւ Ասիլ: Ը չըջանի Տաշպուլաղի թիւ 23 ընտրատարածքի բուժարկութիւնը: Ան կ'ընդգրկէր Սաւանի ձորակի Սէլիւզէն, Սանդը, Պատարա, Տաշպուլաղ եւ Տահրա գիւղերը: Առաջին 4ին մէջ ընտրութիւնները կայացան 1 տարի 4 ամիս առաջ, կազմուեցան համապատասխան յանձնախումբերու արձանագրութիւնները, որոնց համաձայն, Մարտիմ Միրզոյեանը արդէն բաւականաչափ ձայներ ունէր ժողովրդական պատգամաւոր զբանցուելու համար: «Գործեան հանդոյց» դարձաւ Տահրաի տեղաձախ ընտրութիւնը, ուր բուժարկութիւնը կայացաւ անցնող մայիսին:

«Վաչէ Մանուկեան» Փոնտը 12.000 տոլար կը յատկացնէ

Արցախի 100 որբ երեխաներու կեցութեան ծախսերը իր վրայ վերցուցած է յոնտոնահայ բարերար Վաչէ Մանուկեան: «Վաչէ Մանուկեան» հիմնադրամը այդ նպատակին համար արդէն յատկացուցած է մօտ 12.000 տոլար, որու փոխարէքը ուրբիով Ստեփանակերտ հասցուած է հասարակական գործիչ Վարանդ Փափազեանի միջոցով: Հ. Յ. Դաշնակցութեան Արցախի Կեդրոնական Կոմիտէի զբաւեռակին մէջ բարերարի առաջին նուիրատուութիւնը փոխանցուած է զոհուած ազատամարտիկներու ընտանիքներու օգնութեան «Յիշատակ» հիմնադրամին, որ ստանձնած է դրամը բաշխումը հասցեատէրերուն:

«Յիշատակ»ը կը շարունակէ նուիրատուութիւններ ստանալ, զոհուած ազատամարտիկներու ընտանիքներուն բաշխելու համար: Վրանանի Արցախի Օժանդակ Մարմինը «Յիշատակ»ի հաշիւին փոխանցած է եւս կէս միլիոն ուրբիի գումար մը: Ընդհանուր հաշիւով, վերջին երկու ամսուան ընթացքին Վրանանի գաղութը հիմնադրամին փոխանցած է մօտ 2,5 միլիոն ուրբի:

ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻԶՆԵՐ ԱՐԻՆՔ ԿԸ ԺԱՄԱՆԵՆ

Յունիս 22 եւ 23ին, Արեւիկի մէջ պիտի գումարուի «Արտաձողներու Համահեղինական Միութեան» երկօրեայ համագումարը, «Արեւիկեան Եւրոպա եւ Պալատներ» նոր ձեռնարկութիւններու կարելիութիւններ» նիւթով, որուն մասնակցելու հրաւիրուած են Արեւիկեան Եւրոպայի եւ Պալատներու պետական բարձրաստիճան ներկայացուցիչները:

Համագումարը պիտի ուսումնասիրէ նախապայմանները եւ պիտի քննէ տնտեսական ու առեւտրական համագործակցութեան զարգացումը արգելափակող պատճառները: Նոյնպէս առիթը պիտի ստեղծուի ուղղակի յարաբերութեան մէջ մտնելու մասնակցող երկիրներու ներկայացուցիչներուն հետ:

Համագումարին ներկայ պիտի ըլլան ու մաս առնեն Ռումինիոյ, Պոլսի, Ալպանիոյ, Ռուսիոյ, Չեխիոյ, Մոլդովիոյ եւ Հայաստանի ներկայացուցիչ նախարարներ: Հայաստանի կողմէ համագումարին ներկայ պիտի ըլլան տնտեսական նախարարի տեղակալ պրն. Արմէն Դարբինեան եւ արտաքին գործոց նախարարի տեղակալ պրն. Արման Նաւասարդեան:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԿ

ՀԱՅ - ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Յունիս 9ին կարեւորեալ աշխատանքային այցելութեամբ Երեւան ժամանեցին Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Անտոն Գոգիբեւ եւ պաշտօնակազմի նախարար Վիքտոր Պարաննիքով: Պատուիրակութեան մաս կը կազմէին նաեւ Ռուսաստանի պաշտպանութեան նախարարի առաջին տեղակալ գորակար Պորիս Կրանով, արտաքին գործոց նախարարի տեղակալ Պորիս Փաքուլտով, անվտանգութեան փոխ նախարար, Ռուսաստանի սահմանապահ գործերու կրտսեմատար Վլատիմիր Շիխախին, Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորման Ռուսաստանի միջնորդական առաջնութեան ղեկավար Վլատիմիր Բազիլիով եւ պաշտօնակազմի այլ անձնաւորութիւններ:

Օղակայանին մէջ բարձրաստիճանի կիւրքերը ղիմաւորուեցան ՀՀ արտաքին գործոց նախարար Վահան Փափազեանի, ազգային պաշտպանութեան պետական վարչութեան պետ Էտուարտ Սիմոնեանի, ՀՀ նախագահի յատուկ յանձնարարութիւններու ղեկավար Դաւիթ Շահնազարեանի, արտաքին գործոց նախարարի առաջին տեղակալ Ժիրայր Վապարտեանի, Հայաստանի մօտ Ռուսաստանի դեսպան Վլատիմիր Սրուբիչիկի եւ պաշտօնակազմի այլ անձնաւորութիւններու կողմէ:

Ընդունելութիւններու տան մէջ տեղի ունեցաւ հանրապետութեան նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի, Վահան Փափազեանի, Դաւիթ Շահնազարեանի եւ Ժիրայր Վապարտեանի հանդիպումը Անտոն Գոգիբեւի, Վիքտոր Պարաննիքովի եւ Վլատիմիր Բազիլիովի հետ:

Հայաստանի ներկայացուցիչներու հետ հանդիպելէ ետք Ա. Գոգիբեւ, Վ. Պարաննիքով եւ Վ. Բազիլիով հանդիպեցան եւ զրոյց ունեցան Լեւոնային Ղարաբաղի ներկայացուցիչներու՝ ԼԸ պաշտպանութեան կոմիտէի նախագահ Ռուբէն Բոչայրեանի եւ ԼԸ Գերագոյն Խորհուրդի նախագահի պաշտօնակատար Գեորգ Պետրոսեանի հետ:

Հայաստանի եւ Ռուսաստանի ներկայացուցիչներու հանդիպումէն ետք հանդէս գալով լրագրողներուն առջեւ, Դաւիթ Շահնազարեան ըսաւ. -

«Աշխատանքային այս այցելութիւնը կապուած էր ԵԱՀԽ Մինսկի խումբի Լեւոնային Ղարաբաղի մէջ արեւմտահեղութեան զարգացման առաջարկին հետ, որ հիմնուած է ՄԱԿի Ազատութեան Խորհուրդի թիւ 822 որոշման եւ Ռուսաստանի նախագահ Պորիս Նյցինի նախաձեռնութեան վրայ: Հանդիպման ժամանակ բնակարանական իրաւունքներու հետ կապուած շարք մը հարցեր: Մանով է, որ Հայաստանը երկէ տուաւ իր գրական պատասխանը այդ նախաձեռնութեան նկատմամբ: Հանդիպման ժամանակ բնակարանական նաեւ այլ հարցեր, Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ երկկողմանի միջոցառման համագործակցութեան ուղղութեամբ:

Պարտապէս Գոգիբեւ, Պարաննիքով եւ Բազիլիով զրուցեցին ԼԸ ներկայացուցիչներ Ռ. Բոչայրեանի եւ Գ. Պետրոսեանի հետ: Հայաստանի եւ Ռուսաստանի ներկայացուցիչներու հանդիպման ժամանակ երկու կողմերն ալ այս առաջարկը գնահատեցին որպէս իրական հնարաւորութիւն, որ կրնայ յանդիպողական արդիւնքի՝ Լեւոնային Ղարաբաղի մէջ կրակի եւ զինուորական գործողութիւններու զարգացման: Մենք տեղեկացանք, որ Ատրպէյճանը չ'այնպէս նախաձեռնութեան գրական պատասխան տուած է: Առայժմ չ'է պատասխանած միայն Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութիւնը, որ միջեւ յունիս 11 ժամանակ ունի»:

Հանդիպումէն ետք ՀՀ նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան, Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Անտոն Գոգիբեւ եւ ԼԸ ԳԽ նախագահի պաշտօնակատար Գեորգ Պետրոսեան պատասխանեցին լրագրողներու հարցումներուն:

ՀՀ նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան ըսաւ, որ տակաւին կանուխ է արդիւնքներու մասին խօսիլ, անոնք կը յստականան շուտով:

Անտոն Գոգիբեւ նշեց, որ հանդիպումը անցաւ աշխատանքային եւ գործնական մթնոլորտի մէջ, անիկա հնարաւորութիւն տուաւ մշակելու ԵԱՀԽ Մինսկի խումբի նախաձեռնութեան առանձին փոփոխ մանրամասնութիւններ, առանձնացուց այն փոխմթնոլորտը, որ կայ երկու երկիրներու միջեւ: ԼԸ ԳԽ նախագահի պաշտօնակատար Գ. Պետրոսեան իր գոհունակութիւնը յայտնեց հանդիպումի նկատմամբ, նշելով՝ որ ներկայացուած առաջարկները մանրամասնօրէն կ'ուսումնասիրուին:

«Հայաստանի Հանրապետութիւն»
10 Յունիս 1993

Յունաստան - Ռումանիա Գործակցութիւն

Զբօսաշրջիկութեան մարզէն ներս համաձայնագիր մը ստորագրուեցաւ Ռումանիոյ եւ Յունաստանի միջեւ: Ըստ համաձայնութեան, երկու կողմերը պիտի գարգացնեն եւ փայտեղեկ գործակցութիւնը իրենց զբօսաշրջիկական տնօրէնութեան միջեւ, զիւրացնելով զբօսաշրջիկներու երբեք ներկայութիւնը: Անոնք պիտի փայտեղեկանան նաեւ այս մարզէն ներս տեղեկատուութեան, խորհրդատուութեան եւ արհեստագիտութեան փոխանակումը: